ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ HELP ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

30.03.2018 13:55

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչ Տիգրան Կարապետյանի հետ համատեղ ավարտական հավաստագրեր է հանձնել 2017 թվականի աշնանը մեկնարկած «Ընտանեկան իրավունքը և մարդու իրավունքները: Երեխաների և մեծահասակների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները» ծրագրով վերապատրաստված փաստաբաններին:

Վերապատրաստումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի և Եվրոպայի խորհրդի HELP (Իրավունքի ոլորտի մասնագետների ուսուցում մարդու իրավունքների վերաբերյալ) ծրագրի հետ համագործակցության շրջանակներում: Դասընթացի նպատակն էր ընտանեկան իրավունքի վերաբերյալ ներպետական և միջազգային պրակտիկայի համատեղ քննարկումը, դերաբաշխման միջոցով ՀՀ և ՌԴ փաստաբաններին միևնույն խնդրահարույց դատական պրակտիկային անմիջական մասնակից դարձնելը և ուսումնական հարթակում երեխայի լավագույն շահի պաշտպանության համար ստեղծված մարզող դատախաղին մասնակցելը:

Նախագծի իրագործումը հնարավոր է դարձել Փաստաբանական գործունեության հիմնարար սկզբունքների վերաբերյալ 2016թ. մայիսի 19-ին ստորագրված խարտիային հայկական և ռուսական փաստաբանության մասնակցության շնորհիվ:

Վերապատրաստման հեռավար դասընթացը զուգահեռաբար ընթանացել է նաև Ռուսաստանի Դաշնությունում և երկու երկրի 30 փաստաբան տեսակապի միջոցով իրական ժամանակահատվածում համատեղ իրավական վարժանքների են մասնակցել:

Միջոցառմանը մասնակցել է Եվրոպայի խորհրդի HELP ծրագրի համակարգող Անաստասիա Շադարովան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

HELP
CERTIFICATE
ՀԱՆ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ԴԱՏԱՎԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ԴԱՏԱՎԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })